



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀՈԳԵՅԱՆՁԻՍՏ ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՆՇԱՆ ԵՊՍԿ. ԹՕՓՈՒՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ս. Աթոռոյս Դիւանատունէն տրուած հաղորդագրութենէ մը ցաւով



իմացանք, որ վախճանած է Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երիտասարդ անդամներէն՝ Ատրպատականի հայոց Թեմի Առաջնորդ Տ. Նշան Եպսկ. Թօփուզեան, սուգի մատնելով բոլորս: Սրբազան Հայրը շիջած է յետ կարճատեւ հիւանդութեան, Երեւանի մէջ, ուր կը գտնուէր վերջին շաբաթներուն՝ բժշկական դարմանումի համար:

Վեհափառ Հայրապետին տնօրինումով, յառաջիկայ Կիրակի, հոգելոյս Սրբազանին հոգւոյն համար հոգեհանգիստ տեղի պիտի ունենայ Մայրավանքին, ինչպէս նաեւ մեր բոլոր Թեմերու եկեղեցիներուն մէջ:

Արդ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Կիրակի, 2 Մայիս 2010ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ

հոգեհանգիստ տեղի պիտի ունենայ հոգելոյս Սրբազանին յիշատակին: Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ արարողութեան ու աղօթք բարձրացնէ առ Աստուած, որպէսզի Երկնաւոր

Հայրը Սրբազանին հոգին ընդունի իր արքայութեան մէջ ու պարգեւէ
յաւիտեական հանգիստ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ԴԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

IN MEMORIAM
BISHOP NESHAN TOPOUZIAN
(1966-2010)

With deep sorrow we were informed by the Catholicosate of Cilica of the untimely passing of H.G. Bishop Neshan Topouzian, Prelate of the Diocese of Azerbaijan (Iran), which occurred in Armenia on Tuesday, April 27th, following a brief illness.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils join H.H. Catholicos Aram I, the Cilician Brotherhood, and the Diocese of Azerbaijan in mourning this great loss.

Requiem for the soul of the late Bishop will be offered at the Mother Cathedral of the Catholicosate in Antelias, Lebanon on Sunday, May 2nd, 2010. By the order of His Holiness, requiem will also be offered in all the Dioceses of the Catholicosate of Cilicia.

We hereby announce that requiem will take place in Prelacy Churches as well, and invite our faithful to join us on Sunday, May 2nd, as we pray for Almighty God to grant eternal peace and rest to the soul of Bishop Neshan Topouzian.

May his memory remain ever blessed.

PRELACY SECRETARIAT